Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2020թ. դեկտեմբերի 8-ի ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կոլեկտիվի տարեկան հաշվետու ընդհանուր ժողովի

Լսելով ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի 2020թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Վ.Լ.Հարությունյանի հաղորդումը, ինստիտուտի ընդհանուր ժողովը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ինստիտուտի տնօրեն, պրոֆ. Վ.Լ.Հարությունյանի ինստիտուտի 2020թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետվությանը և այն ընդունել որպես ինստիտուտի հետագա գործունեության ծրագիր:

2. Լավ գնահատել ինստիտուտի կոլեկտիվի աշխատանքը և գիտական ձեռքբերումները:

3. Հաշվի առնելով ապագայի հրամայականներն ու մարտահրավերները, առաջնորդվելով ինստիտուտի գործունեության արդյունավետության շարունակական բարձրացման պահանջով, առաջնահերթ խնդիրներ ենք համարում՝

3.1 Շարունակել գիտաշխատողների երիտասարդացման գործընթացը՝ ձևավորելով և ապահովելով ինստիտուտի ապագան հարստացված ու երիտասարդացված գիտական անձնակազմով:

3.2 Փոխարինողներ պատրաստել ինստիտուտի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարների համար՝ անկախ նրանց տարիքից՝ ապահովվելով ինստիտուտի կայուն աշխատանքն ու նվազեցնելով կախվածությունն առանձին աշխատակիցներից:

3.3 Ապահովել ինստիտուտի արդյունավետ գիտական գործունեությունը և դրան համահունչ կիրառական առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը:

3.4 Առավել արդյունավետ և նպատակային ծախսել պետական բյուջեից հատկացվող գումարները՝ ինչպես աշխատավարձի, այնպես էլ մնացած ծախսային հոդվածների մասով:

3.5 Շարունակել հրատարակչական գործի արդյունավետության բարձրացումը՝ լույս ընծայելով մնայուն ու ինստիտուտին հեղինակություն բերող գրքեր:

3.6 Ընդլայնել համագործակցությունն այլ երկրների նույնանուն ինստիտուտների հետ: Ամենամյա հանրապետական գիտաժողովներին ներգրավել մասնակիցներ արտասահմանից:

3.7 Ակտիվացնել աշխատանքները ինստիտուտի գիտաշխատողների կողմից դրամաշնորհային և մասնավորապես արտասահմանյան ծրագրերին, մասնակցելու ակտիվության բարձրացման ուղղությամբ:

3.10 Լրացուցիչ ուշադրություն դարձնել ինստիտուտի գիտական ձեռքբերումների հանրայնացման խնդիրներին՝ հրատարակված աշխատանքների վերաբերյալ գրախոսությունների, բաժինների աշխատանքների կտրվածքով հաշվետվությունների, մամուլում հաղորդումների ձևերով, իսկ առանձին դեպքերում էլ հրատարակված աշխատությունները համապատասխան մարմիններին կամ հասցեական ուղարկելու ձևով:

4. Առաջադրված խնդիրների լուծման ուղղությամբ առաջընթացն ապահովելու համար՝

4.1. հանձնարարել ինստիտուտի տնօրինությանը և թեմաների ղեկավարներին՝ ուժեղացնել հսկողությունը կատարվող թեմաների ժամանակին ու որակով կատարման նկատմամբ՝ հաղորդելով գիտահետազոտական աշխատանքներին գիտագործնական ուղղվածություն:

4.2. Գիտական կապեր հաստատել այլ երկրների տնտեսագիտական և հարակից մասնագիտական ինստիտուտների, կենտրոնների և այլ կազմակերպությունների հետ:

5. Սույն որոշման կատարման ընթացքը և 2021թ. առաջին կիսամյակի արդյունքները 2021թ. հուլիսին քննարկել ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում:

Նախագահող՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ. **Վ.Լ. Հարությունյան**

Ժողովի քարտուղար՝
տնտ. գիտ. թեկ., դոցենտ **Ք.Յու.Բաղդասարյան**
Կ. Տ.